□□ □□□□□□ □□□□□□□□ □□□□□□□ □□□□□□□ □□□□□□□□□□□□□ □□□□□□□□□ □□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□ □□□□□□□□ □□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□ □□□□□□□□□ □□□□□□□□□□□ □□□□□□ □□□□□□□□□, □□□□□□□□□□□□. «□□ □□□□□□□□□□ □□□□□ □□□□ □□□□□□□□□□ □ □□□□□□□,□□□□□□□□□□□,□□□□□□□□□ □□□□□□ □□□□ □□□□□□□□□□ □□□□□□□ □ □□□□□,□□ □□□□□□□ □□ □□□□□□□□□□ □□ □□□□□□□ □□□□□□□ □□□□□□□□ □□□□□ □□□□□ □ □□□□□□□□ □’□□□□□□□ «□□□□□□□ □□□□□□□□□□□» □□□□□□□□ □□□□□□□□□□□□□ □□□□□□□ □□ □□□□ □□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□ □□□□□□□□□□□□□. «□□□□ □□□□□□ □□□□□□ □□□□ □□□□□□□ □□□□ □□□□□□ □□□□□□□□ □□□□□»□ □□ □□□□□□ □□ □□□□□□□□□□□□□□□ □□□□ □□□□□□□□□□□□ □□ □□□□□□□□ □□»□

□□□□□□□□□ □□□□□

Իմ ընտանիքը ծագումով Թբիլիսիից է, այստեղ ապրում է մեր չորրորդ սերունդը: Ժամանակին ապուպապս հայտնվեց Վրաստանում՝ փրկվելով Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանությունից, եւ այդպես էլ մնաց Թբիլիսիում: Ես շատ եմ սիրում իմ քաղաքը եւ իմ կյանքը չեմ պատկերացնում առանց նրա, թեպետ, խոստովանեմ, որ ունեցել ենք այստեղից հեռանալու հնարավորություն: Ավելին, ամուսինս՝ Վալերին, նույնիսկ կատարեց Գերմանիա տեղափոխվելու փորձ, թեպետ միեւնույն է, վերադարձավ, չկարողացավ ապրել առանց Վրաստանի: Գուցե բարին էլ դա էր:

□□□□□□□□□ □□ □□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□ □□□□□□

Ավարտել եմ անգլիական թեքումով Թբիլիսիի թիվ 116 միջնակարգ դպրոցը, առաջին դասարանից խորացված ուսումնասիրել եմ լեզուն: Լեզվի այդ իմացությունը մինչ օրս ինձ շատ է օգնել եւ, դպրոցից բացի, նպատակամղվածորեն երբեք լեզվի ուսուցմամբ չեմ զբաղվել: Երախտապարտ եմ անգլերենի իմ մանկավարժներին: Առանձնակի շնորհակալություն եմ ցանկանում հայտնել ռուսաց լեզվի ուսուցչուհուս: Նրանց շնորհիվ է, որ այսօր ինձ կարող եմ համարել գրագետ մարդ:
Ընդհանրապես, տանը խոսում էինք ինչպես վրացերեն, այնպես էլ՝ ռուսերեն: Ինստիտուտում հիմնականում ուսանում էինք վրացերեն, իսկ անգլերենը յուրացրեցի դպրոցում: Այս երեք լեզուներից բացի, տիրապետում եմ նաեւ հայերենին՝ խոսում եմ, կարդում, ճիշտ է՝ միայն տպագրված տեքստերը: Դրանք բավականին տարբերվում են ձեռագրերից:
Դպրոցն ավարտելուց հետո, ցանկանում էի ուսումս շարունակել միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: Սակայն այն ժամանակ, երբ ես բուհ էի հանձնում, ԹՊՀ-ում նման ֆակուլտետ չկար: Ուստի, ընտրեցի էքվթիմե Թաղաիշվիլու ինստիտուտը: Դա վճարովի բուհ էր, որը գործում էր արտասահմանում ապրող վրացիների աջակցությամբ:

□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□ □□□□□□

Ստացվեց այնպես, որ 5-րդ կուրսում հարեւանուհիս եւ ընտանիքիս բարեկամն ինձ տարավ հեռուստատեսություն: Հարկ էր մի հաղորդման համար անգլերենից թարգմանություն կատարել: Ահա թե որտեղ պետք եկան դպրոցում ստացած գիտելիքներս:

Ըստ երեւույթին, կատարած աշխատանքս դուր եկավ, եւ ինձ վերցրեցին «Վեստնիկ» լրատվական ռուսալեզու խմբագրությունում: Սկսած 1998 թվականից այնտեղ աշխատեցի 9 տարի, առաջին հանրային հեռուստաընկերության ռուսալեզու խմբագրության թղթակիցն էի: Սիրում եմ գտնվել անընդհատ շարժման մեջ: Գրասենյակային առօրյան ինձ հարմար չէր: Հիշում եմ, սկզբնական շրջանում ամուսինս շատ էր անհանգստանում, որ ուշ էի վերադառնում տուն, սակայն այդ հարցը «տնավարի» կարգավորեցինք: Ֆիզիոլոգիական արձակուրդից վերադառնալուց հետո, ամեն ինչ փոխվեց: Եթե մինչ այդ մենք ամեն երեկո եթերում էինք, ապա այդ ժամանակ մեկ ծրագիրը հեռարձակվում էր շաբաթական մեկ անգամ: Ճիշտ է, պաշտոնս պահպանվեց, սակայն ակնհայտ էր, որ ինչ-որ փոփոխություն պետք է կատարեի: Որոշեցի գտնել նոր աշխատանք:

□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□ □□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□

Եթե ինձ ասեն, որ Վրաստանում անհնարին է առանց ծանոթի ու բարեկամի աշխատանք գտնել, չեմ հավատա, քանզի ներկայիս իմ պաշտոնը զբաղեցրեցի Jops.ge կայքի շնորհիվ: Ես ուղղակի իմ տվյալներն առաքում էի հայտարարության մեջ նշված հասցներով: Կարճ ժամանակում ինձ հրավիրեցին հարցազրույցի: Ես հարցազրույցով նախ անցա փոքրամասնությունների գործերով եվրոպական կենտրոնում, ապա, երկու օր անց, հրավիրեցին ժողովրդական պաշտպանի գրասենյակ, որտեղ զրուցեցի Վրաստանի ազգային փոքրամասնությունների խորհրդի համակարգող Կոբա Չոպլիանու հետ: Այսպես, ես ընդունվեցի աշխատանքի: Ինձ համար դժվար չէր ներգրավվել ազգային փոքրամասնությունների հետ կապված գործերում: Հեռուստատեսությունում աշխատելու ժամանակ հաճախ եմ պատրաստել հաղորդումներ՝ նվիրված Վրաստանի ազգային բազմազանությանը: Կարելի է ասել, որ իմ գործունեության ոլորտը չեմ փոխել, ուղղակի կրկին սկսեցի զբաղվել նույն գործով, ուղղակի՝ մի փոքր այլ որակով: Ներկայումս աշխատում եմ ազգային փոքրամասնությունների խորհրդի գործադիր քարտուղարի պաշտոնում, եւ իմ աշխատանքն ինձ դուր է գալիս: Հետաքրքրվում եմ բոլոր այն հարցերով, որոնք առնչվում են ազգային փոքրամասնությունների իրավունքի պաշտպանությանը, քաղաքացիական ինտեգրմանն աջակցող գործընթացներով: Ժողովրդական պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհուրդը սկզբում ծրագրված էր որպես ժողովրդական պաշտպանի խորհրդատվական մարմին, սակայն, ելնելով խորհրդի ակտիվությունից, այն դարձավ ազգային փոքրամասնությունների հարցերով պետական մարմինների հիմնական գործընկերներից մեկը: Խորհրդի կազմում ներգրավված է ավելի քան 90 ազգային փոքրամասնությունների ոչ կառավարական կազմակերպություն: Աշխատանքի բերումով, երկրում շատ եմ ուղեւորություններ կատարում, լինում են եւ արտասահմանյան գործուղումներ:

□□□□□□□ □□□□□□□□□ □□□□□

Ամուսնուս հետ համադասարանցիներ էինք: Նա կրթությամբ տնտեսագետ-միջազգայնագետ է, աշխատում է Վրաստանում Եվրամիության դիտորդական առաքելությունում: Ամուսինս ազգությամբ կիսով չափ ասորի է, կիսով չափ՝ վրացի: Ժամանակի ընթացքում դպրոցական բարեկամությունը վերածվեց փոխադարձ սիրո, եւ ահա 19 տարի մենք միասին ենք: Որոշեցինք ամուսնանալ երկրորդ կուրսում, երբ ընդամենը 18 տարեկան էինք: Մեր

ծնողները շատ էին անհանգստանում, քանզի շատ էինք երիտասարդ, սակայն ժամանակը ցույց տվեց, որ մենք ճիշտ ընտրություն կատարեցինք:

□□□□□□□□□□□ □□□□□□

Դուստրս՝ Լանան, ծնվել է փետրվարի 14-ին, սիրո օրը: Նա 11 տարեկան է, որդիս՝ Միշան, 8 տարեկան է: Ընդհանրապես, երեխաներս մի փոքր ուշ ծնվեցին, մեր ամուսնության ութերորդ տարում: Նախ՝ սովորում էինք, ապա՝ աշխատում: Հիմա մենք շատ երջանիկ ենք:

□□□□□□□□□ □□□□□□

Ծնողներս ամուսնալուծվեցին, երբ ես փոքր էի: Մայրս՝ Լարիսան, ամենամոտ անձնավորությունն է ինձ համար: Նա իմ էության անկապտելի մասն է: Մենք ապրում ենք միասին, մայրս խնամում է թոռներին, եւ ես շատ հանգիստ եմ:

□□□□□□□ □□□□□□

Ողջ ընտանիքով շատ ենք սիրում հանգիստը: Հենց ազատ ժամանակ ենք ունենում, մեքենայով ուղեւորվում ենք բնության գիրկ: Սիրում ենք լինել Վրաստանի գեղատեսիլ վայրերում: Սիրում եմ թխել, ընդհանրապես այն ամենը, ինչ կապված է խմորի եւ այլուրի հետ: Սիրում եմ թատրոն, հաճախ ենք լինում թատերական պրեմիերաներին: Կյանքս չեմ պատկերացնում առանց երաժշտության: Սիրում եմ երաժշտության բոլոր ժանրերը, բացառությամբ՝ ծանր ռոքի ու ռեպի: Մեղեդու ընտրությունը կախված է տրամադրությունից:

□□□□□□□ □□□□□□ □□ □□□□□□□ □□□□□□

Ցանկանում եմ ձեզ հետ կիսվել իմ փոքր գաղտնիքով: Եթե վատ տրամադրության մեջ եք, ինքներդ ձեզ հյուրասիրեք շոկոլադով, եւ ձեր տրամադրությունը կբարձրանա: Նաեւ կցանկանայի կանանց, որ նրանք չվախենան ուժեղ լինել: Երբ տղամարդիկ տեսնում են, որ կինը ինքնուրույն է եւ կարող է իր իրավունքները պաշտպանել, կամա թե ակամա, նրան սկսում են հարգել որպես անհատի, իսկ իսկական սերը առանց հարգանքի չի լինում: Դեռեւս շատ են խոսում այն մասին, որ տղամարդիկ թույլ կանանց են սիրում, թեպետ դա այդպես չէ: Ըստ իս, նշանակալիցը սիրո եւ թուլության միջեւ ոսկե միջինն է: Ինձ համար իդեալական կինը ուժեղ է եւ միաժամանակ՝ նուրբ: Բնականաբար, դժվար է անել այնպես, որպեսզի տղամարդիկ բոլոր ցանկություններն ընկալեն որպես իրենցը եւ ուրախությամբ այն կատարեն: Պետք է գործել նրբորեն ու քնքուշ: Հավատացեք, արդյունք անպայման կլինի:

□□□□□□□□ □□□□□□□□□□□